ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՇՏԱՐԱԿԻ Ս. ՇԱՀԱԶԻԶԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

20.12.2023թ.

ՈՐՈՇՈՒՄ

«ՀԱՅԿԱԶՈՒՆՔ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետով՝

Որոշում եմ
«Հայկազունք» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տեղեկացնում եմ, որ Արագածոտնի մարզի «Աշտարակի Ս. Շահազիզի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի՝ «Հայկազունք» ՍՊԸ-ի միջև «18» օգոստոսի 2023թ. կնքվել է՝ N ՀՀԱՄ-ԱՇՏԱՐԱԿ-N2-ՀԴ-ԳՀԱՊՁԲ-23/02-2 ծածկագրերով պետության կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման պետական գնման պայմանագիրը, սակայն 24.11.2023թ.-ից վաճառողի կողմից խախտվել է մատակարարման ժամկետները և պայմանագրով սահմանված դրույթները, չի պատասխանում հեռախոսազանգերին և չի մատակարարում պայմանագրով նախատեսված ապրանքները:

Հիմք ընդունելով վերոգրյալը և Պայմանագրի 8.11 կետը՝ Պատվիրատուն 05.12.2023թ միակողմանի լուծել է՝

Արագածոտնի մարզի «Աշտարակի Ս. Շահազիզի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի և «Հայկազունք» ՍՊԸ-ի միջև «18» օգոստոսի 2023թ. կնքված՝ N ՀՀԱՄ-ԱՇՏԱՐԱԿ-N2-ՀԴ-ԳՀԱՊՁԲ-23/02-2 պայմանագիրը:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ, Պատվիրատուին ծանուցվել է, որ օրենքով նախատեսված լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը պայմանագրի որակավորման ապահովման գումարները վճարելու դեպքում, պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

Սակայն «Հայկազունք» ՍՊԸ-ն սահմանված 10 /տասը/ աշխատանքային օր ժամկետում չի վճարել տուժանքներով սահմանված որակավորման և պայմանագրի ապահովումների գումարները:

Այսպիսով, «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետի համաձայն՝ «Հայկազունք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը Պատվիրատուն կներկայացնի լիազորված մարմին, իսկ Վաճառողի կողմից պայմանագիր կնքելու նպատակով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով, կներկայացվեն Վաճառողի բանկ՝ նշված գումարները գանձելու նպատակով:

ՏՆՕՐԵՆ՝ Ս. ԱՎՈՅԱՆ